



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

L6n  
358

ԲՈՒՂԱՐՄԵՐԻ ՄԱՍԻՆ



Եւրոպայի հարաւային ծայլում գտնվում  
է մի սեպաձև տարածութիւն, որը կոչվում է  
Ռալկանիան թերակղզի: Այս թերակղզին հիւ-  
սային կողմից բաժանվումէ Եւրոպայից Դա-  
նուք գետով, իսկ արևելեան, հարաւային և  
արևմտեան կողմերից շրջապատուած է ծովե-  
րով: Ռաւական երկիրներ կան այս թերակղզու  
վերայ. մեր կողմերում եղած մեծ նահանգնե-  
րի նման երկու, երեք տասնեւակներ կարող են  
տեղաւորուիլ նորա մէջ: Այստեղ ապրում են  
շատ ազգեր զանազան լեզուներով, ինչպէս՝  
Բուլղարներ, Յոյներ, Տաճիկներ, Վլանացի-  
ներ, Ճայեր, Ճէաներ և ուրիշ շատ ազգեր:  
Այս ժողովուրդներից մի մասը ունեն թագա-  
ւորութիւններ, ինչպէս՝ Աերբելը, Աերբիայի

Հելնօգօրիայի իշխանութեանց մէջ և Յոյները՝  
Յունաստանի թագաւորութեան մէջ: Ի՞այց  
նոցանից մեծ մասը հապառակ են տաճիկներին,  
սուլթանի իշխանութեան ներփայ են, իսկ ո-  
մանք էլ որոնք ապրում են թերակղզու արե-  
մատեան մասում, այսինքն Դալբատիայում, հը-  
պատակ են Աւստրիայի կայսեր: Եյս անգամ  
ևս կը պատմեմ այս ժողովուրդներից բուլ-  
ղարների մասին:

Ի՞ուլղարացիները ապրում են Դանուբ գե-  
տի աջ ափում գտնուած ընդարձակ տարա-  
ծութեան վերայ և դէպի հարաւ նորանից, և  
այս երկիրը կոչվում է Ի՞ուլղարիա: Ի՞ուլղա-  
րիայում արևելքից դէպի արևմուտք տարած-  
վում են Բալկանեան լեռները. արևելեան մա-  
սում այս լեռները ցածր են, և քանի դէպի  
արևմուտք են ձգվում՝ այնքան աւելի բարձր  
ու ժայռոտ են գառնում: Ճիւսիսից նոքա իջ-  
նում են դէպի Դանուբ գետի ափերը զառ ի  
վայր կողքերով, իսկ հարաւային թեւելը լի են  
ժայռերով ու խորափետներով: Եյս ամբողջ եր-  
կիրը ունի շատ բնական հարստութիւններ և

Եւլոպայի ամենալաւ մասերից մինն է: Լեռ-  
ների ստորոտները ծածկուած են կանաչ խիտ  
անտառներով, իսկ պտղատու հովիտների միջով  
հոսում են մանր ու խոշոր բազմաթիւ գետեր:   
Սակայն բուլղարները միայն Ի՞ուլղարիայում  
չեն որ ապրում են, նոցանից շատերը ցլուած  
են ամբողջ Ի՞ալկանեան թերակղզում: բայց  
Ի՞ուլղարիայում նոքա ապրում են ուրցն, կամ  
թէ շատ սակաւ խառնուելով միւս ազգերի  
հետ, իսկ Ի՞ալկանեան թերակղզու միւս մա-  
սերում ապրում են ուրիշ ազգերի հետ խառն,  
այն է տաճիկների, յոյների, հայերի, ալբանա-  
ցիների և այլոց: Եյտեղ կը պատմեմ կարգով,  
թէ ի՞նչ ազգ են բուլղարները, ինչո՞ւ են կոչ-  
վում այսպէս, ի՞նչպէս են ապրել առաջ և  
ի՞նչպէս են ապրում այժմ:

Առղջայի միջին հոսանքին մօտիկ, ոչ հեռու  
այնտեղեց՝ որտեղ Աամայ գետը միանում է  
Վոլգայի հետ, Սպասեան գաւառում: Դա-  
զանի նահանգում, Ուսպիշան գիւղին մօտ, մին-  
չեւ այժմ գտնվում են մի հին քաղաքի աւե-  
րակներ: Եյդ քաղաքի շինութիւններից այժմ

մոռւմ են միայն պատերը, այստեղ պյանաեղ թափուած են քարի կցյալը, երեռւմ են հին փոսեր, կայ մինչև անգամ մի ամբողջ աշտարակ, որ ըջակայ բնակիչները անուանում են ՄԵՐԵՅ: Երեք հարիւր տարուց աւելի է, որ ոչ ոք չէ ապրում այս քաղաքում. բայց հին պատերի մէջ դեռ մնացել են յիշատակութիւններ նորա մասին: Առցա մէջ պատմվում է, որ այդտեղ եղել է հին ժամանակ Բռուղար քաղաքը, բուլղարացիների թագաւորութեան մայրաքաղաքը, որը կոչվում էր ՄԵՏ կամ Կամեան Բռուղարիա: ԺԻ-րդ դարում թուրքերը կործանում են բուլղարների թագաւորութիւնը. իսկ բուլղարները մասամբ կոտորվում են, մասամբ ցրվում և մասամբ ձուլվում այնտեղ ապրող միւս ազգերի հետ: Եւ երբոր ՈՌՈՒՆՆերը այդ տեղերը նուածեցին՝ Բռուղարիայի հին թագաւորութեան բոլոր հողերն ել նոյն ձեռքն անցան: Եյսպիսով այստեղում բուլղարների թագաւորութիւնը, նոյն իսկ նոյն անունը անհետացան, յիշատակ թողնելով մի այն հին պալատների և բուրգերի աւերակներ:

ՈՇԽԱԳՅԱԼ բուլղարների թագաւորութիւնը մի տեղում, բայց կրկն շարունակուեց մի այլ տեղում: Եյս պատահեցաւ հետեւեալ կերպով: Մօտ հազար տարի առաջ, ինչպէս պատմում են գիտունները, ՎԱՐԼԳԱՅ գետից մինչև Ուրալեան լեռները՝ ապրում էր ԲՐՈՒՂԱՐ անունով մի ազգ, որը հիմնեց բուլղարների թագաւորութիւնը, այն է ՄԵՏ ԲՐՈՒՂԱՐիան: Մի քանի ժամանակից յետոյ նեղուեցան ուրիշ աղգերից և իրանց մէջ ծագեց մի բան՝ գաղթել յայտնի է՝ որ նոցա մի մասը բաժանուելով անցաւ հարաւային ՈՌՈՒՍԻԱՅի գաշտավայրերը և հասաւ մինչև ՊՐԱՆՈՒՐ գետը: Եյդ ժամանակ ՊՐԱՆՈՒՐի երկու կողմերումն ևս ապրում էին արդէն ԱԼԱՎՈՆ ազգեր, որոնք խաղաղ երկրագործներ և անասնապահներ էին: Առքա մասամբ կառավարում էին իրանք իրանց, իսկ մասամբ հապատակ էին հարեւան յշյների թագաւորութեան: Իսկ ՎԱՐԼԳԱՅի և Ուրալի կողմերից եկած բուլղարները՝ պատերազմական աղդ էին և այս պատճառաւ, երբ գաղթեցին խաղաղ սլաւոնների երկիրը, վերջիններս չկա-

լողացան պաշտպանութիւնոցանից: Ալաւոն ցեղարի մի մասը հպատակեց նորենիներին, և այն ժամանակից այդ սլաւոնները իրանց նուածողների անունով կոչուեցան բուլղարներ: Եյսպիսով հիմնուեցաւ բուլղարների նոր թագաւորութիւնը, որը Կամայի և Վոլգայի վերայ եղածից զանազանելու համար կոչուեցաւ Դանուբեան Բուլղարիա: Եյս նոր թագաւորութիւնը հիմնուեցաւ Երդ գարու վերջում, այսինքն՝ հազար երկու հարիւր տարի առաջ:

Իւր հիմնուելու օրից սկսած բուլղարների թագաւորութիւնը ստիպուած էր վարել պատերազմներ, պատերազմել հարեան յշների թագաւորութեան հետ, որին, ինչպէս վերև յիշուեցաւ, հպատակում էին սլաւոն ազգերը, այս պատճառաւ՝ ցանկանում էին հպատակեցնել և սոցա: Եյս անընդհատ պատերազմների մէջ, երբեմն բուլղարներն էին յաղթում և երբեմն յշները: Երբ բուլղարներն էին յաղթում, վերցնում էին յշներից հարուստ հարկեր: Երբ յշները—նոքա նշնպէս մտնելով Բուլղարիա կոտորում էին ժողովրդին և դնում նոցա վե-

բայ ծանր հարկեր: Վերջապէս յաղթութիւնը մնաց յշների կողմը և բուլղարները հպատակեցան նոցա: Եյս բանին օգնում էր և այն, որ յշները կրթուած ազգ էին և բուլղարներն ուսումն էին ստանում նոցա մօտ, նոցանից ընդունեցին և քրիստոնէութիւնը: Ակղքում, ինչպէս այնտեղ ապլող միւս սլաւոնները, նոյնպէս և նորեկ բուլղարները հեթանոս էին, այսինքն՝ երկրպագում էին արեգակին, աստղերին, կուռքերին: Վակաւ առ սակաւ յշն քահանաները սկսեցին գնալ Բուլղարիա քարովելու քրիստոնէութիւնը: Վերջապէս, Ռուրդ գարում գնացին քարոզել բուլղարներին Աիրիւի և Մեֆոդիա եղբայրները, մլրտեցին բուղարների Միքայէլ թագաւորին, իշխաններին և բոլոր բուլղարներին: Եյն ժամանակից հպատակուեցաւ քրիստոնէական հաւատը: Ա. Կիրիլը սովորեցրեց նոյա գրել ու կարգալ իւրեանց լեզուով, թարգմանեց Ո. Գիրքը և այլ եկեղեցական գրքեր: Բուլղարներից վերցրեցին Ա. Գրոց թարգմանութիւնը ուսումները, որը մինչ այսօր կարգացվում է նոցա եկեղեցում:

ԺԱՐ-ՐԴ դարում ՚Բ. ՚Օ. յետոյ բուլղարների թագաւորութիւնը բոլորովին ընկաւ և հպատակեցան յոյների կայսրներին: Միայն հարիւր յիսուն տարի յետոյ յաջողեցաւ բուլղարներին ազատութիւ յոյների հպատակութիւնից և նորից վերականգնել Բուլղարիայի թագաւորութիւնը, բայց երկար չտեղ և այս: Շուտով նուածուեցան համացեղ ժողովրդից—այն է սերբերից, իսկ յետոյ նոցա հետ միասին տաճիկներից:

Տաճիկները եկան Բալկանեան թերակղզի ԺՊ-ՐԴ դարու կիսում Եսիայից, որտեղ ապրում էին մինչ այն ժամանակ: Վակաւ առ սակաւ առաջ գնալով գէպի խորքերը Բալկանեան թերակղզու, հասան մինչեւ բուլղարների և սերբերի երկիրները: Բուլղարները և սերբերը փորձեցին պատերազմել նոցա հետ, բայց անյաջող անցաւ: 1389 թուին տաճիկները բոլորովին ջարդեցին սերբերի և բուլղարների զօրքերը և շուտով նոքա հպատակեցան տաճիկների սուլթանին: Եյն ժամանակից մինչեւ վերջին ժամանակներս, այսինքն՝ մօտ հինգ հա-

րիւր տարի, գտնվում են տաճիկների իշխանութեան ներքոյ:

Շատ ու շատ նեղութիւններ և ամենայն տեսակ թշուառութիւններ քաշեց այս նահատակ ազգը: Տաճիկները, իւրեանց կրօնի համեմատ, հպատակ ազգերից նոցա՝ որոնք մահմեդական չեն, անուանում են Գէալլու-ը (անհաւատ), որը իւրեւ անսասուն պէտք է բանէ իւր ախոջ մօտ և անպայման հնազանդէ նորան:

Բուլղարներին նուածելուց յետոյ, նոցա բուլղարներին կոտորեցին, իսկ հասարակ ժողովուրդին բեռնաւորեցին ուժից վեր հարկերով: Տաճիկ կառավարիչները առան նոցա ստացուածքը, յափշտակեցին երեխաններին և կանանց և մինչեւ անգամ անմեղ մանուկներին սպանում էին: Եյս բոլորի վերայ աւելացան անպատուութիւններ և նեղութիւններ: Բուլղարները յիշում են մինչ օրս, թէ ինչպէս, օրինակ, տաճիկը ծխելով պայլանը կանչում էր բուլղարացուն, հրամայում էր նորան խոնարհեցիւ զուկիւր և նորա պարանոցի վերայ թափում էր տաք մոխիրը և մինչեւ անգամ վառ

ածուխը և ստիպում էր մնալ այդ գրութեան  
մէջ, մինչւ որ տաճիկը մաքրէր պայլանը և նո-  
րից վառէր նորա պարանոցի վերայի ածուխով:  
Դեռ յիշում են և այն ժամանակը, երբ տա-  
ճիկները կուշտ ուտելով և խմելով բուլղարա-  
ցու տանը, պահանջում էին նոցանից դիւ Գ-  
րանի, այսինքն՝ ատամնավարձ, նրա համար՝ որ  
նեղութիւն են քաշել կուշտ ուտել և խմել են:  
Բայց շատ կերկարէր պատմել այն բոլորը, ո-  
րոց համբերեցին բուլղարները: Տաճիկների ճըն-  
շումների՝ վերայ աւելացան և յօյներինը: Են-  
պէս միւս քրիստոնեաները, նշնպէս նոքա սկզ-  
բացին կրել զանազան նեղութիւններ տաճիկ-  
ներից: Բայց յօյների մէջ շուտով զինաւորա-  
պէս Ա. Պօլսում ապրողների, որտեղ յօյները  
ապրում էին քաղաքի մի մասում, որը կոչվում  
էր Ֆանար, երեւան եկան վատ մարդիկներ, ո-  
րոնք փողի և այլ շահասիրական դիտումներով,  
սկսեցին գործիք դառնալ տաճիկները: Որպէս  
զե առաւել ևս սիրել դառնան, սկսեցին ցցց  
տալ իւրեանց իբրև հաւատարիմ ծառաներ  
սուլթանի, իսկ միւս քրիստոնեաներին ցցց

էին տալիս իբրև խռովարարներ և մատնիչներ:  
Վակաւ առ սակաւ հասան մինչ այն կէտը, որ  
տաճիկները սկսեցին հաւատալ նոցա, ընդու-  
նել պաշտօնների մէջ և տալ պաշտօնատեղիններ  
միւս քրիստոնեայ ազգերի մէջ: Տաճիկների այս  
պաշտօննեաներից շատ վասներ հասան քրիս-  
տոնեայ ազգերին, նշյն իսկ յօյներին: Ըստ ան-  
գամ էր պատահում, որ՝ երբ բուլղարները փոր-  
ձում էին ազատուել տաճիկների լուծից, յօյ-  
ները աշխատում էին արգելք լինել և մինչեւ  
անգամ մատնել սուլթաննին: Եհա՛ ինչպէս, օ-  
րինակ, նկարագրվում է բուլղարների մի երգի  
մէջ յօյների խորամանկութիւնները:

— Մայրը օրօրում է իւր Ատեփան որդուն  
և ասում. «Վուն եղի՛ր, որդիս, քուն եղի՛ր  
և մեծացի՛ր շուտ. երբ կը մեծանաս, ազատի՛ր  
սեպհական թագաւորութիւնդ օտարների ձեռ-  
քից, որովհետեւ այդ պատկանումէ քո հօրն ու  
մօրը»:

— Բայց ՞ւր է, հալցնում է որդին, հրա-  
ցանս, սուր, թուրս և իմ հայրական գայիսոնը:

— Եյդ բոլորը կայ, որդիս, միայն հեծի՛ր

նժցյզը, կիւրակէ օրն վաղ արթնացի՞ր, ջերմ  
աղօթի՞ր Աստուծուն, ժողովի՞ր զօրքերդ և մի  
վախենար ոչ ոքից. միայն զգյշ եղի՞ր խորա-  
մանդ յշներից, խորամանդներից և մատնիշնե-  
րից, որոնք մատնեցին քո հօրն Եղբիանուպո-  
լս քաղաքում եօթը հազար զօրքով։ Եյնաեղ  
գերեցին նորան տաճիկները և թլքացրին իւր  
զօրքերը։

Հեծաւ ձին Ստեփանը, շարեց զօրքերը բը-  
լուրների և լեռների վերայ, բռնեց բոլոր քա-  
րանձաւները, այնպէս՝ որ տեղ չկար անցնելու։

Լաւով այս Ա. Պօլսի յշներից մինը, գնում  
է սուլթանի մօտ և ասում։

— Մեծդ սուլթանն, ապրած կենայ թագա-  
ւորութիւնդ. լսե՞լ ես, սուլթանն, Տընվացի  
երիտասարդ զօրապետ Ստեփանի մասին, որը  
սուր է բարձրացրել որպէս զի ազատէ իւր  
թագաւորութիւնը, ասելով՝ որ այն պատկա-  
նում է իւր հօրն ու մօրը։

— Եթէ այդ ճշմարիտ է, պատասխանեց  
սուլթանը, եօթանասուն եօթն հազար զօրք  
կուղարկեմ Ստեփանի դէմ։

Ուղարկեց զօրքը, յշնի առաջնորդութեամբ։  
Ստեփանը յշնին տեսնելուն պէս, կանչեց  
իւր բոլոր զօրապետներին և սկսեց ասել նոյա-  
— Օօրապետնե՛ր, երիտասարդ հսկանե՛ր,  
բայց արէ՛ք արիւնոտ կարմիր գրօշակները։

Բոլոր զօրապետները միաձայն պատասխա-  
նեցին։

— Ուրախութեամբ կերթանք ջարդել տա-  
ճիկներին և կենդանի կը բերենք խորամանդ  
յշնին։

Բոլոր տաճիկներին ջարդեցին, բայց խորա-  
մանդ յշնը ազատուելով փախաւ Ա. Պօլս։

Տաճիկների ծանր ճնշումները մի քանի բուլ-  
ղարներին հասցրին մինչ այն աստիճանը, որ  
նոքա ընդունեցին մահմետականութիւնը։

Եյս մահմետական բուլղարները մինչ օրս  
կան տեղ տեղ և կոչվում են Ի՞նմատնեց, այսինքն  
հաւատից հերձուածներ։ Սակայն բօմաքները  
այժմ սակաւ են և եղածներն ես իւրեանց սո-  
վորութիւններով և կեանքով առաւել նման են  
քրիստոնեաներին, քան մահմետականներին. մահ-  
մետական տօների հետ տօնում են և քրիստո-

նէականը, պահում են պաս, և այլն: « Նոքա ա-  
մենքը խօսում ենք, բուլղարների լեզուով, և  
ինչպէս քրիստոնեաները, նոյնպէս նոքա չեն  
սիրում տաճիկներին, օրինակ, այսպէս են եր-  
գում բօմաքները մի երգի մէջ. »

« Ե ծնել բօմաքին քնքոյշ տաճկուհին,  
Թաւշում, մետաքսում չէ մեծացել նա,  
« Նա չէ կերակրուել համեղ բաներով,  
Ի՞այց ծնել է նորան կոշտ բուլղարուհին,  
Իսկ մեծացել է կաղնու տակ հսկայ,  
Աերակրուել է նա ձաթի հացով,  
Ա երցրեց դաշոյնն ու սպանեց տաճիկն...»

Ի՞այց չպէտք է կարծել որ բուլղարները ան-  
արտունջ տանում էին իւրեանց ստրկութիւնը:  
Ո՞չ նոցանում գտնվում էին քաջ մարդիկներ,  
որոնք կռվում էին տաճիկների հետ: Այս քաջ  
մարդիկները կոչվում էին հայրուպներ, որոնք  
մինչ օրս կրում են այդ անունը: Այսուտուն-  
ը հեռանում էին լեռները, վարում էին ա-  
մենածանը և տաժանելի կեանք, թաղչելով լեռ-  
ների քարանձաւներում և անանցանելի տեղե-

լում և ժողովին վարում իսում, յարձակում  
էին տաճիկների վերաց, անխնայ կոտորում էին  
նոցա ու կողոպտում և այնպիսով վրէժինդիր  
լինում, որքան ոյժը ներում էր, իւրեանց հայ-  
րենիքը անարգենուն համար: Առտօրելով տա-  
ճիկներին, հայտուտները միենյն ժամանակ  
օգնում էին իւրեանց հայրենակիցներին, մինչև  
անգամ վտանգի ենթարկելով իւրեանց անձը,  
յատկապէս այն ժամանակ՝ երբ հարկաւոր էր  
լինում պաշտպանել քրիստոնեաներին տաճիկ-  
ներից, կամ վրէժինդիր լինիլ մի որեւէ բուլ-  
ղարացու ընտանիքն անպատուելուն համար:

Մեծ մասամբ հայտուտութիւն էին անում  
այնպիսի մարդիկ՝ որոնց կնոջը, աղջկան, որ-  
դուն յափշտակում էին, կամ աւերում ստաց-  
ուածքը. իսկ այսպիսի մարդիկ շատ էին լե-  
նում բուլղարների մէջ:

Ահա ինչպէս է նկարագրվում մի երգի մէջ  
հայտուախ տխուր ձակատագիրը:

« Երբ նա գեռ մանուկ էր, փաշան բռնի  
յափշտակեց տանից՝ հօր և մօր ձեռքից, նորա  
քրոջը, նորա համար՝ որ նա սիրուն էր: Մի

քանի ժամանակից յետոյ նորա հայրն անցնելով հանգստացող մի փամփկ զինուորի մօտով, դիպաւ նորա պայմաններ: Տաճիկը հանեց ատրանակը և սպանեց խեղջին անզգուշութեան համար: Մայրը յուսահատութեան մէջ էր. ամենայն դիշեր գնում էր լալու և ողբալու իւր մարդու գերեզմանին վերայ...: Անոջ լացի հետ ոռնում էին քաղաքի շները և այդ անհանգըստացրեց փաշային: Ոիրելով ամենայն տեսակ գաղանային վայելքութիւններ, հրամայեց փաշան շներով սպանել կնոջը իւր և նորա բարեկամների աչքի առաջ: Մեծ որդին մտաւ շների խմբի մէջ, որպէս զի գոնէ դուրս բերէ մօրը գզըզուած դիսկը. այս բանի համար փաշան հրամայեց կախել նորան: Վարդող ընտանիքից մնաց մի որբ մանուկ. փաշան վանտեց նորան տանից և նորա ստացուածքը զրաւեց արքունական գանձարարանը...: Ոչ ոք չունէր անտէր մանուկը. բայց ահա խղճացին նորան հայտուաները, վերցրեցին իւրեանց հետ լեռները, մեծացնելով դարձրեցին նորան մի տղամարդ, և նա այժմ թափառում է իւր

զօրքով լեռներում և հովիտներում, իւր ծընողների և բարեկամների արեան վրէժը լուծելու համար»:

Հայտուաների աւաղակախմբերը մինչ օրս թափառում են Բուլղարիայի լեռներում, առաւելապէս նորա արեկեան մասում, որտեղ նոյն խսկ բնութիւնը նպաստում է նոցա: Եյտեղ Բալկաննեան լեռները առաւել բարձր են և ժայռոտ, քան միւս մասերում: Ճածկուած են անթիւ քարանձաւներով և դարաւոր անտառներով: Մինչ այսօր հայտուաները մեծ յարգանք ունեն բուլղարների մօտ, և լինել հայտուտ՝ նշանակում է լինել պաշտպան հայրենեաց: Թէև հայտուաների քաջութիւնը չաղատեց Բուլղարիան տաճիկների լուծից, բայց այնու ամենայնիւ նոքա օգտաւէտ են նորանով, որ պահեցին նոցա մէջ պատերազմելու ողին նեղիների դէմ, յիշեցնում էին նոցա որ վաղ թէ ուշ բայց պէտք է թօթափել թշնամու լուծը: Եյդ պատճառաւ, այն տեղերում, որտեղ թափառում էին և թափառում են հայտուաները, տաճիկները այնքան չէին Ճնշում

բուլղարներին, և նոյն իսկ բուլղարները այնպէս չեն խոնարհում նոցա առաջ, ինչպէս Բալկանից դէպի հարաւ գտնուած հովիտներում:

Յիրաւի, լեռնային բուլղարների մէջ, երեսնական թուականներից, երկում է և տարէ ցտարի առաւելանում ձգտումն թօթափելու տաճիկների լուծը և սկսումն փորձեր անել թէև շատ անգամ անյաջող էին անցնում: Այդ ժամանակից երեան են գալիս բուլղարներից գիտուն մարդիկներ, որոնք գնալով զանազան երկիրներ, սովորում էին գիտութիւններ և յետոյ վերադառնում հայրենիք, բաց էին անում ուսումնարաններ, շարադրում էին մայրենի լեզուվ զանազան գլուխեր, ևայլն: Մինչ այն ժամանակ Բուլղարիայում, մի քանի եկեղեցիների և վանքերի մօտ թէե կային ուսումնարաններ, բայց նոցա մէջ ոչինչ չէին սովորեցնում, բացի եկեղեցական զլուկերից, և այն ևս յունարէն. բայց այդ ժամանակից սկսում են բանալ ուսումնարաններ, որոնց մէջ սովորեցնում էին զանազան գիտութիւններ բուլղարների լիզուով:

Եռաջին այդպիսի ուսումնարանը բացուեցաւ 1835 թուին մի գիւղում, յետոյ սկսեցին բանալ ուրիշ ուսումնարաններ և միւս տեղերում, ինչպէս գիւղերում, այնպէս և քաղաքներում, և ամեն գաւառներում, որտեղ ապրում էին բուլղարներ:

Ճարուստները՝ այդ ուսումնարանների լաւ աշակերտներին ուղարկում էին Խւրոպայ զանազան քաղաքները սովորելու բարձրագոյն դպրոցներում, համալսարաններում, ճեմարաններում ևայլն. սոցանից պատրաստվում էին լաւ ուսուցիչներ նոր ուսումնարանների համար: Տասը տարուց յետոյ Բուլղարիայում կային արդէն յիսունից աւել լաւ ուսումնարաններ, հրատարակում էին լրագիրներ, ամենայն տարի տպում էին բուլղարերէն հազարաւոր գլուխեր և բաժանում գիւղերումն ու քաղաքներում, այս բոլորն անում էին, չնայելով, որ յայն հոգեորականութիւնը աշխատում էր վնասնել ուսումնարանների կազմակերպութեան, երբեմն մատնում էր ուսուցիչներին, ինչպէս խոռվարաններին և շատ անգամ սպանում է-

ին նոցա, չնայելով և այս բանին, բուլղարները  
վերջին կոպէկը գործ էին դնում ուսումնա-  
րանների գրութիւնը պահելու համար:

Սուրանից եօթն ութն տարի առաջ Բուլ-  
ղարիայում կային հինգ հարիւրից աւելի ու-  
սումնարաններ, որոց մէջ սովորում էին մի քա-  
նի տասմնեակ հազար աշակերտներ, ինչպէս տր-  
դայներ նոյնպէս և աղջեկներ և մինչև անդամ  
հասակաւորներ: Երբ աստիճանաբար սկսուեց  
տարածուել բուլղարների մէջ կրթութիւնը,  
ցանկութիւն ծագեցաւ նոցա մէջ թօթափելու  
տաճիկների լուծը և յաճախ փորձեր էին ա-  
նում հասնելու դրուն:

Ինչպէս, օրինակ, 1841 թուին Նիշ և  
Պիրօդ քաղաքների մօտ ապրող բուլղարները,  
տանջուելով զանազան հարկերով և Ճնշում-  
ներով զէնքի դիմեցին: Ի՞այց տաճիկները շու-  
տով ժողովեցին ահագին զօրք, կոտորեցին ա-  
պրստամբներին և աւերեցին բուլղարների զիւ-  
ղերը:

Տասը տարի յետոյ (1851 թուին) աստի-  
ճանաւորների կողոպատմները, կալուածատէ-

րերի և յոյն հոգևորականութեան Ճնշումները՝  
նորից ստիպեցին դժբաղդ բուլղարներին ա-  
պրստամբելու: Ի՞այց զէնք չունէին, ստիպուած  
էին կոռւիլ մաշակներով և կացիններով, գո-  
րա համար ևս, չնայելով նոցա քաջութեան,  
յաղթուեցան տաճիկներից և նորից ենթար-  
կուեցան աւելիման և պատիժների:

Նոյնպէս անյաջող անցաւ 1867 թուակա-  
նի փորձը: Ի՞այց այս Ճնշումներն և կողոպ-  
տումները ամենեին չփատեցրին առաւել մեծ  
ուժով պատրաստուելու և նորից ապստամբելու:

Հատ ուսուցիչներ, որոց վերայ կասկածում  
էին իրեւ ապստամբներ, և հասարակ ժողո-  
վուրդ պատժուեցան և մեռան բաներում:

Վրիմի պատերազմից յետոյ, երբ Ուսուաց  
աէլութիւնը՝ միասին միւս եւրոպական տէ-  
րութիւնների հետ խաղաղութեան դաշն կա-  
պից տաճիկների հետ, այս աէլութիւնները  
բուլղարների համար պահանջեցին զանազան  
արտօնութիւններ. ինչպէս, օրինակ, եկեղեցի-  
ներ, ուսումնարաններ հիմնելու, տաճիկների  
գաղտաստանատաններում ունենալ իւրեանց բնա-

բելիները, օգտուիլ այն ամեն արտօնութիւններով, որոնցով օգտվում են միւս քրիստոնեայ ազգերը: Առուսաց կայսեր օգնութեամբ յաջողեցաւ բուլղարներին ազատուել յըն հոգեուրականութիւնից. Հեռացուեցան յըն քահանաները և նոցա փոխանակեցին բուլղարները:

Եյսպիսով բուլղարների կեանքը, փերջին տասն տասն ու երկու տարիներում, առաջուանից շատ թեթևացաւ: Բայց մինչեւ փերջին տարիներս անտանելի էր նոցա վիճակը: Թէև տաճիկների սուլթանը շատ անդամ էր խոստանում բարւոքել նոցա վիճակը և մինչեւ անդամ աշխատում էր կատարել խոստումն, բայց չէր կարողանում, որովհետեւ կառավարչական կազմութիւնը վատ է կազմակերպուած Տաճկաստանում:

Ամբողջ Տաճկաստանը լաժանուած է նահանդների և կառավարվում են փաշաներով, այսինքն՝ նահանդապետներով: Սովորաբար փաշանշաներում են ոչ թէ ամենալանդունակներին և խելօններին, այլ ամենախորամանկներին, նոցա՝ որոնք մի որեւէ բանով շահումին սուլ-

թանին, նորա մօրը, սիրելի կանանց կամ նըշանաւոր պալատականներից մինին, այն ևս ոչ առանց փողի, այլ փողով, այնպէս որ՝ փաշալինելու համար երբեմն վճարում են հարիւր հազարներ, և այն ևս ոչ թէ մէկ, այլ մի քանի: Ճասկանալի է, որ այսպիսի նահանգապետը, որն իւր պաշտօնը գնել է փողով, չէ աշխատում երկրի բարելաւութեան համար, այլ ոլքան կարելի է շուտով ձեռք բերել գործ գրած փողը և ապրել շոայլ պահել բթամիտ և անառակ կանաքը, շատ ձիեր, ծառաներ ևն:

Փաշայի ստորագրեալ պաշտօնեաներն ևս նուրանից փողով են գնում իւրեանց պաշտօնները, այնուշեաւ ոչ մի խարութիւն չեն գնում միջոցների մէջ՝ թէ ի՞նչպէս առաւել շատ փող աշխատեն. պատահում են գէպքեր՝ որ հարուստների փողերը յափշտակում են և եթէ յաջողում է գողանում են նոյն իսկ ալքունականը: Եյս պատճառաւ բոլոր քաղաքների աստիճանաւորները, սկսած փաշայից մինչեւ վերջին գրագիրը, ոռջիկ չեն ստանում, այլ ապրում են իւրեանց պաշտօններից եկած եկա-

մուտներով. իսկ թէ ի՞նչ կերպով պէտք է ըստանան այդ եկամուտները, այդ ևս նոցա գործն է:

Եյսպիսով համարեա ամբողջ տաճկական կառավարութիւնը մշտական հարստահարութիւն է. աւագ աստիճանաւորները կողոպտում են ստորիններին, ստորինները ժողովրդին, երկուսն ևս միասին տէրութեան գանձարանը: Խթէ այս բոլորին աւելացնենք և այն, որ համարեա ամենայն տարի փոփոխվում են՝ ինչ պէս փաշաները, նշյնպէս և միւս աստիճանաւորները, այդ պատճառաւ իւրաքանչեւրը նոցանից աշխատում է ոչ միայն շուտով ձեռք բերել պաշտօնը ստանձնելու համար գործ զբած փողը, այլ աշխատել մի մեծ գումար, ի հարկէ հասկանալի է, թէ ի՞նչպէս է ապրում ժողովուրդը այսպիսի կառավարութեան ներքօյ: Աակայն մեծ իրաւունքներ ունեն աստիճանաւորները. օրինակ՝ փաշան կարող է մահուան պատիժ տալ յանցաւորին, եթէ նա անիրաւացի է պատժում, կրկին զուր է անցնում պատժուղի գանգասաները: Դատաստանաաներում նիստ են կայացնում տաճիկները

և գատում իւրեանց օրէնքի համեմատ, միշտ յայտնի է, որ քրիստոնեան մեղաւոր է, իսկ մահմէտականը միշտ իրաւացի. այս պատճառաւ ևս քրիստոնեայի գանգատը մահմէտականի դէմ անօգուտ է, նշյն իսկ այդ պատճառաւ քրիստոնեայի վկայութիւնը մահմէտականի դէմ չէ ընդունվում: Ռշմարիտ է, վերջին տարիներս սկսեցին ներս թողնել քրիստոնեաների ընտրելիներին դատաստանաաներում, բայց եղած չեղած մի հաշեւ է, որովհետեւ սոցա չեն լսում և ոչ ուշագրութիւն դարձնում խօսքերին: Եհա ինչ է պատմում մի ճանապարհորդ նոցա դատաստանական կարգերի մասին:

«Մի բուլղարացու հարաբն ուժով յափշշտակում է մի տաճիկ: Բուլղարացին գնում է փաշյի մօտ և գանգատում: Փաշան դատաստանի է կանչում տաճիկն, որտեղ ներկայ են լինում փաշան, յոյն քահանան, տաճիկ դատաւորներ և բուլղար տանուտերեր: Եյս իմացել էր տաճիկը նախօրօք և չէր թագում, դատաւորների առաջ խոստվանում է, որ իսկապէս յափշտակել է բուլղարացու հարսին,

այն պատճառաւ, որովհետեւ իմանում էր, որ  
այդ աղջիկը ցանկանում էր ընդունել մահմէ-  
տականութիւնը, բայց նորա մայրը կամենում  
էր պսակել գետը-ը (քրիստոնեայի) հետ: Աս  
շտապեց ազատել աղջկան անհաւատների ձեռ-  
քից: Փաշան լսելով տաճկին յայտնեց յշն քա-  
հանային և տանուտէրներին, որ տաճիկը ի-  
րաւացի է և նա վարուել է օրէնքի համեմատ:  
Այն ժամանակ տանուտէրները ասացին, որ  
նոքա չեն հաւատում տաճկի խօսքերին, թող  
բերէ աղջկան, որպէս զի նա ամենքի առաջ  
ասէ, որ ցանկանում է ընդունել մահմէտական-  
ութիւնը: Փաշան հրամայեց տաճկին բերել  
աղջկան դատաստանի: Հետեւեալ օրը տաճիկը  
բերեց մի կին, գլխից մինչ ոտքերը փաթաթ-  
ուած սաւանով:

— Դու նա ես — հարցրեց փաշան:

— Ես, պատասխանեց կինը:

Բայց տանուտէրները պահանջեցին, որպէս  
ու վեցնէ սաւանը, ասելով որ չեն հաւա-  
տում թէ նա փախցրած կինը լինի:

Փաշան պատասխանեց թէ՝ մահմէտակա-

նութիւն ընդունած կինը չպէտք է բանայ իւր  
երեսը կողմանակի մարդիկների առաջ:

— Ցանկանում ես ընդունել մահմէտակա-  
նութիւնը, հարցրեց փաշան:

Կինը սկսեց հայհոյել քրիստոնէական հա-  
ւատը և ասել. եթէ չկանէր նորին պայծառա-  
փայլ փաշայի առաջ, կապանէր իւր մօրը, այն  
պատճառաւ, որ նա մինչև այժմ չէ թողել ըն-  
դունիլ մահմէտականութիւնը.

Ի զուր էր փախցրած աղջկայ մայրը պղն-  
դում ծնկների վերայ ընկած, որ նա իւր աղ-  
ջեկը չէ, որ ձայնն ամենելին նորանը չէ...:

Փաշան հրամայեց գուրս տանել. «Ճշմար-  
տութիւնը պարզ է, ինչպէս օր», ասաց նա և  
արդարացրեց տաճկին:

Բուղարները զիսաւորապէս պարապում են  
երկրագործութեամբ: Աակայն հողերի բոլով  
պտղատու մասերը, այն նահանգներում, որտեղ  
ապրում են բուղարները, պատկանում են տա-  
ճիկներին, կամ թէ կապալով են տրուած, իսկ  
բուղար երկարագործը պէտք է վերցնի նոցա-  
նից վճարով: Մեծ մասամբ նա վճարում է

կալուածատէրին միերբորդ մասը, իսկ միևնոյն ժամանակ իէսն ևս վերցնումէ արտի մէջ։ Բացի դուանից բուլղար զիւղացին դեռ պէտք է վճարէ արքունական բազմաթիւ հարկեր, որովհետև տաճիկների կառավարութիւնը ամենայն բանի, ամենայն արտադրութիւնների վերայ զրել է հարկեր։ Միևնոյն ժամանակ հարկերը այնաեղ ժողովում մէն մի այլ տեսակ մի որեւիցէ հարուստ մարդ նախօքք տալիս է արքունի գանձարանին փողը, իսկ յետոյ ինքն ժողովում է զիւղացիներից ինչպէս կամենայթէ երկու կամ երեք անգամ առաւել կժողովէ այդ ևս նորա գործն է։ Հասկանալի է, որ կապալառուները հաւաքելով հարկեր շատ չեն նազ անում և հազուադէպ չէ, որ զիւղացիները վճարում են նշանակուածից երկու երեք անգամ առաւել։ Գանգատուել կապալառուների անիրաւութիւնների վերայ անօպուտ է, որովհետև բոլոր տաճկական աստիճանաւորաները ստանում են նոցանից փող, իսկ ո՞ւ ունի փող շատ սակաւ կպատահէ որ դատաստանատներում դատապարտուի։ Տաճիկների

այդ բոլոր կարգերից ծագում էր այն, որ բուլղար զիւղացիները շատ ուժասպառ պէտք է աշխատեն, որպէս զի աշխատեն այնքան, որ կարողանան վճարել իւրեանց վերայ դրուած հարկերը, իսկ իսկական պիտոքների համար մնում է շատ սակաւ։ Բուլղար զիւղացիների մէջ ունեորները հազուադէպ են, նոյն իսկ նոցա բնակարանները հիւսուած են ձիւղերով և ծիփած կաւով. բայց նայած նոցա այսպիսի չքաւորութեան, պէտք է ասել որ բուլղարները սիրում են մաքրութիւն և կամոնաւորութիւն։ Ճշմարիտ, խղճալի է բուլղարների զրութիւնը մինչև անգամ հանգիստ ժամանակ, բայց սարսափելի այն ժամանակ՝ երբ տաճիկները մտածում են կողոպտել նոցա, այն պատրուակով՝ որ իբր թէ կամենում են ապրատամբել, կամ իսկապէս բուլղարները փորձում են ապատուել տաճիկների լծից, ինչպէս, օրինակ՝ պատահեցաւ 1876 թուին, երբ սերբերի նման փորձում էին ապատամբել տաճիկներից։ Եյդ ապատամբութիւնը, ինչպէս առաջուանները, յաջողութիւն չունեցաւ, այլ աւե-

լացրեց առաւել ևս շատ թշուառութիւններ։  
Յիրաւի, ամենքը յիշում են այն սարսափելի  
լուրերոր լսումէր իւրաքանչեւրը տաճիկների  
գաղանային արարմունքները։ Տասնեակ հազար  
մարդիկներին, անմեղ կանանց և մանուկներին  
տաճիկ պալբ-պառ-ժները կոտորեցին, գիւղերը  
և քաղաքները այլեցին...։

Նոյն թուականին բուլղարները գրում են  
ուռսաց և երոպական տէրութիւններին։

Առտորում են հազարաւոր մարդիկներին  
օրական, մեզ կտոր կտոր են անում գաղանա-  
յին կերպով։ Մեր անմեղ սպանուած տղանե-  
րի և աղջիկների զիակները թափուած են փո-  
ղոցներում և նորանցով շներն ու գիշակեր թրո-  
չուններն են կերակրվում։ տաճիկները չեն թոյլ  
տալիս գոնէ վերցնել և թաղել, նոքա խորո-  
վում են մեր որդւոց և նոցա միսը տալիս են  
մեզ ուտելու...։

Զնայելով այս ամենին, այս դժբաղդ ազգը  
ապրում է այնպիսի բնութեան մէջ, որ կարող  
էր շահուել այնպէս, ինչպէս մի քանիսը մեր  
երկի բնակիչներից։ Ի՞ուլղարների ապրած եր-

կիւր, ինչպէս ասած եմ, պատկանում է Եւ-  
րոպայի ամենաքերրի երկիրների թուին։ Եմե-  
նայն տեղ հովիտները սեհող են, բերրի հող  
լեռների փէշերի վերայ ձգուած են կեռասենու,  
սալումնու, ընկուզենու, յածախ խաղողի ան-  
տառներ։ իսկ լեռների բարձրութեանց վերայ  
կան հիանալի մարդագետիններ, որոնք առատ  
արօտատեղիններ են անսառւնների համար...։  
Դէ կարելի ասել որ բուլղարացին չէ կամե-  
նում կամ չէ կարողանում օգտուել իւր հայ-  
րենիքի հարուստ բարութիւններով. ընդհա-  
կառակն, ով որ եղել է Ի՞ուլղարիայում և ապ-  
րել նոցա մէջ, կվկայէ, որ նոքա աշխատասէր  
մշակներ են և հմուտ երկրագործներ։ Թշուա-  
ռութիւնն նորանումն է, որ բուլղարները իւր-  
եանց երկրի տէրը չեն, չեն կարող ունենալ  
այնքան ինչ որքան կկամենային։ Միւնքն ժա-  
մանակ, եթէ սկսեն մշակել շատ հողեր—օգու-  
տը կրկին սակաւ կլինի. քանի՛ շատ աշխա-  
տեն, այնքան շատ պէտք է վերցնեն տաճիկ-  
ները. աշխատասէր երկրագործների համար մի  
ենցն է, քանի որ չպէտք է օգտուին իւրեանց

կրկնապատկած աշխատանքների պտուղներով:  
 Այս պատճառաւ շատ հողեր մնաւմ են ան-  
 մշակ, իսկ ժողովուրդը աղքատ: Պարած հո-  
 ղե երկու երրորդ մասը ցանում են եղիպատ-  
 ցորեն, որը բուլղարների գլխաւոր ուտելիքն է:  
 Մասցած միերորդ մասումն ևս ցանում են ցո-  
 րեն, բրինձ, ծխախոտ, ևայլն: Բանջարեղիննե-  
 րից ցանում են՝ լոպի, սոխ, խստոր, մանա-  
 ւանդ վերջինս նոցա սիրելի ուտելիքն է, սոխն  
 ևս նոցա սեղանների վերայ յաճախ լինում է:  
 Բուլղարիայի կիման բարեխառն է—ոչ ամա-  
 ռը սաստիկ շոգ է լինում և ոչ ձմեռը սաստիկ  
 ցուրտ, որը երկար չէ տևում, ընդամենն երկու  
 ամիս: Պարեխառն կիման նպաստումն տնկել  
 թթենիներ շերամի որդերին կերակրելու հա-  
 մար, բամբակ, խաղող, եթէ մեծ տուրքեր չը  
 նշանակէին, որոնցով ծանրաբեռնուած են բուլ-  
 ղարները, միայն շերամապահութիւն և խաղո-  
 ղը կարող էին հարստացնել բուլղարիայի երկ-  
 րագործին: Ո՞ի քանի տեղերում գեռ կան մի  
 առանձին ձեւ վարդէ իւղ պատրաստելու, որը  
 բուլղարիայից տանումն եւ այլ երկիրներ: Բն-

կցող նոյնպէս կարող էր տալ լաւ աշխատանք:  
 Դժբաղդաբար ինչպէս վարդէ իւղի, նոյնպէս  
 և ընկուզի վերայ գրուած ծանր հարկերի պատ-  
 ճառաւ սոցա արժէքը պակասում է: Սալորե-  
 նու և մրգեղինների այցները նոյնպէս կարող  
 էին եկամուտների լաւ աղբիւրներ կաղմել: Ա-  
 րօտատեղինների առատութիւնը՝ ինչպէս հո-  
 վիտներում, նոյնպէս լեռների փեշերի և բարձ-  
 րութեանց վերայ նպաստաւոր են անասնապա-  
 հութեան. ձիեր, ցլեր, եղներ, ոչխարներ, այ-  
 ծեր, խոզեր մեծ հօտերով թափառումն այս-  
 տեղ: Յատկապէս լեռնոտ տեղերում շատ են  
 պահում այծեր: Բնդհանրապէս նոցա հօտերը  
 ժողովում են մի տեղ և հովէնները ահագին  
 շները հետերնին, պանիր պատրաստելու հա-  
 մար ամանների զանազան պաշարներով, ուղե-  
 ւորվում են լեռնոտ կողմերը: Խիտ անտառնե-  
 րը կամ ձիւղերից շինած խրձիթը ծառայում  
 է պատսպարանի տեղ. կաթը, պանիրը և մի  
 կտոր հաց նոցա կերակուրն են կազմում: Աշ-  
 նան լեռներից վերադառնում են հովիտները:  
 Բայց բուլղարացու համար ամենանշանաւոր

անասունը գոմէն է: Կնչպէս մեզանում շատ  
տեղ սայլերին լծելու կամ ծանրութիւններ  
կրելու համար գործ են ածում գոմէներ կամ  
եզներ, նոյնպէս և բուլղարիայում: Սակայն,  
միայն երկրագործութեամբ և անասնապահու-  
թեամբ չեն պարապում բուլղարները: Օ-անա-  
զան արհեստներ նոյնպէս շատ տարածուած  
են նոցա մէջ: Հիւմանութիւն, քարտաշութիւն,  
ատաղձագործութիւն, բրուտութիւն, փական-  
ագործութիւն, զորգագործութիւն և մահու-  
տահիւտութիւն նոցա լաւ յայտնի են: Յատ-  
կապէս Բալկանեան լեռների վերայ ապլող  
բուլղարները յայտնի են իւրեանց արդիւնագոր-  
ծութիւններով: Եւրաքանչիւր զիւղ այստեղ  
ունի իւր արհեստը. մէկում երկաթագործու-  
թիւն, միւսում փայտեայ ամաններ շինել, եր-  
րորդում գորգագործութիւն կամ մահուտա-  
հիւտութիւն ևայլն: Լաւ բուլղար վաճառա-  
կաններ ևս շատ են, որոնք տաճիկների քաղաք-  
ներում պարապում են վաճառականութեամբ,  
նոյն իսկ միւս քաղաքներում, սակաւ չեն պա-  
տահում և հարեան երկիրներում: Ո՞րպէս այդ

վաճառականների մէջն են, որ լինում են հա-  
րուստներ: Բուլղարների մէջ աղնուականներ  
ամենեւին չկան. եթէ մնացած ևս լինեն հիւ-  
խանների ժառանգում միւսներից. տաճիկները իւր-  
եանց Ճնշումներով ամենքին հաւասարեցրել են: Բուլղարների մէծ մասը, բացի քաղաքա-  
ցիներից, ապրում են մէծ ընտանիքով մի տան  
մէջ: Բուլղար գիւղացիները չեն թողում հայ-  
րական տունը, ոչ թէ միայն որդիքը, այլ թոո-  
ներն և ձորները, այնպէս որ մի ընտանիքում  
լինում են յիսուն և մինչեւ անգամ ութսուն  
հոգի: Այսպիսի ընտանիքը կոչվում է նահա-  
պետական կամ հայրենի օջախ: Երբ ընտանի-  
քի անդամները բազմանում են, ի հարկէ այն  
ժամանակ դժուար է ապլել մի տան մէջ, ուս-  
տի շինումն բակում նոր տուն, զլխաւոր խրբ-  
ճիթի մօտ: Երբեմն պատահում է, որ ամբողջ  
բակը բռնվում է տներով և նորը շինելու տեղ  
չէ լինում: այն ժամանակ փնտում են մօտիկ  
տեղում յարմար տեղ և աւելացած անդամնե-  
րին ուղարկում են ապլելու: Բայց ինչպէս այս

Հեռացած անդամները, նոյնպէս և զլխաւոր տանը ապրողները կառավարում է մի մարդ, միասին ուտում են, միասին տնտեսում և բոլոր ինչքը լինում է ընդհանրական։ Պլխաւոր տունը, որտեղ հաւաքվում են ընտանիքի բոլոր անդամները ձաշելու, շինում են ընդգարձակ և յարմարաւոր, իսկ նորա շուրջը—մանր խըրծիթներ նորապսակների մանուկների օրօրոցների համար։ Բուլղարների տները սովորաբար շրջապատուած են այգիներով, համարեա միշտ կարելի է տեսնել և ծաղիկներ, որովհետեւ ծաղիկները ծառայում են իրեւ զարդեր բուլղարուհիների համար։ Բարձր ցանկերը շրջապատում են բուլղարացու բակը և պաշտպանում են ընդհանրապէս ահագին վայրինի շները, որոնք միշտ պատրաստ են պատառելու առանց առաջնորդի ներս մտնող օտարին։ Այս նախազգուշութիւնը նորա համար է, որ ներս չմտնեն անկոչ հիւրեր, տաճիկների կամ չերքէղների աւազակախմբեր։ Տան զլխաւոր կառավարիչը լինում է ընտանիքի աւագ անդամը—պապը, հայրը կամ եղբայրներից աւագը,

որը կոչվում է տանտէր կամ պապ։ Ամենքը պարտաւոր են լսել նորան և անտրաունջ կատարել նորա հրամանները։ Տանտէրը կամ պապը պէտք է պահէ կարդ ու կանոն, տան մէջ խաղաղութիւն, նշանակէ իւրաքանչիւրին թէ երբ ի՞նչ պէտք է անէ, վաճառէ աւելորդ իրերը, գնէ ինչ որ հարկաւոր է, վճարէ հարկերը, իսկ աստիճանաւորների Ճնշման ժամանակ և պաշտպանէ ընտանիքը։ Աակայն պապը ինքնիշխան չէ կառավարում, նշանաւոր դէպքերում, կամ ընտանիքի անդամների մէջ անհամաձայնութիւն ծագելուն՝ խորհրդի է ժողովում բոլոր հասակաւորներին և վճռում գործը, ինչպէս կվճռէ մեծամասնութիւնը։ Ինչ նոր բան է կամենում անել պապը, անպատճառ խորհրդակցում է հասակաւորների հետ։ Այս պատճառաւ ամենամեծ ընտանիքում մեծ մասամբ պահվում է համաձայնութիւն։ ընդհանրապէս նոցա ընտանիքում, բուլղարացու հեղաբարյ լինելու պատճառաւ Հագուարէստ են կոիւ և վիճաբանութիւն։ Ոչ միայն ազգականները, այլև օտարները ապրում են խաղաղ

ևուժի ներածի չափ օգնում են միմեանց: Օտանազան աշխատանքներ կատարում են միասին ընդհանուրի ուժով, այնպէս և Ռուլղարիայում կատարում են այդ սովորութիւնը ցորենի հընձին, այդեկիթին ևայլն: Ո՞ինչև անդամ այդպիսի աշխատանքը, ինչպէս մեզանում, նոյնպէս և նոցանում կոչվում է փոխարայ աշխատանք: Ինչպէս մեզանում—նոյնպէս բուլղարների մէջ սովորութիւն է այդպիսի աշխատանքի ժամանակ՝ երգեր, ուրախութիւն, պար և զանազան խաղեր, յատկապէս երիտասարդների մէջ: Երբոր գնում են հեռու տեղ աշխատանքի՝ կաղմում են խումբ, որը կառավարում է ընտրված խմբապետը. խմբին եղբեմն վարձում են տաճիկ կալուածատէրերը: Նոյնպէս յաճախ, մի քանի ընտանիքներ միանում են կատարելու բոլորի աշխատանքներն և բանում են միմեանց մօտ հերթով՝ որով գործը լինում է յաջող և շուտ: Եյս կոչվում է հերթաշխատութիւն: Երբ որ պապը միւսների հետ գնում է աշխատանքի, ամբողջ տունը կառավարում է տարը. նա աշխատում է, վաճառում և գնում,

միւս ժամանակներում տնտեսում, պատրաստում պաշարներ և հետեւում միւս կանանց: Ընդհանրապէս թէե բուլղարացու կինը շատ պէտք է աշխատէ, ինչպէս լինում է աղքատ ընտանիքներում, բայց միւնցն ժամանակ իւր մարդուց և ամբողջ ընտանիքում յարգվում է և ոչ այնպէս, ինչպէս մեզանում շատ տեղերում—հայ ընտանիքներում. կինը պարտաւոր է կրել ամենայն տեսակ անարգանքներ: Անոց և մարդու մէջ, եղբօր և քրոջ մէջ Ռուլղարիայում կատարեալ հաւասարութիւն է. հազուադեպ է, որ բուլղարացին մի գործ սկսելիս չխորհրդակցէ ինոց հետ: Յաճախ բուլղարացու քնքոյշ բնաւորութեան պատճառաւ, ընտանիքում գերադասութիւնը կանանց է տըրվում: Բայց պէտք է ասել որ աշխատող ժիր և խելացի բուլղարների կանայքը՝ նոցա ծանրաբեռն կեանքը շատ են թեթևացնում. ուրախ, կայտառ և հիմանալի գեղեցկուհիներ են նոքա: Աւ, իիտ և կամարաձև յօնքերով թուխերեսով, բարակ բերանով սև մազերով, որոնք թափուած են և ձգուած մինչ կրունկները—

ահա արտաքինը բուլղարուհու . . . : Ահա ինչ-  
պէս է երգում բուլղարուհին մի երգի մէջ, դի-  
մելով բուլղար երիտասարդին.

« Ես իմ սիրելուս եմ ուզում:  
Թակապէտ բորբիկ ու տկլոր եմ,  
Ի՞այց գեղեցիկ եմ, սիրուն  
Թակապէտ օժիտ և փող չունեմ,  
Ի՞այց օժտի տեղ ես ունեմ  
Սպիտակ երես, կարմիր թշեր,  
Երւ սեորակ խիտ-խիտ յօնքեր . . . » :

Խաղաղութիւն և սէր տիրելու պատճառ-  
ներից մին ևս՝ բուլղարացու ընտանիքում, այն  
է՝ որ սակաւ է պատահում ակամայ և փողով  
պսակներ, այլ մեծ մասամբ լինում են պսակ-  
վողների փոխադարձ սիրով: « Ով որ փողի հա-  
մար է պսակուել, նա իւրեան վաճառեց », ա-  
սում է նոցա առակը: Պսակուելուց առաջ ե-  
րիտասարդը և աղջիկը կարող են լաւ ծանօ-  
թանալ. շատ են խաղում Շորթի, որ սովո-  
րութիւն է նոցանում տօներին, գալնան և ա-  
մառն: Չնայելով տաճիկների Ճնշման, այնու

ամենայնիւ բուլղարները մեծ մասամբ ուրախ  
ընաւորութիւն ունեն և յաճախ կլսեն երգեր: Յատկապէս ուրախ բնաւորութիւն ունեն այն-  
տեղի բնակիչները, որտեղ ապրում են ուրոյն,  
ինչպէս լեռնային Բուլղարիայում, որտեղ ա-  
ռաւել սակաւ են Ճնշում տաճիկները:

Ճանդիսաւոր ժամանակ բուլղարացու ըն-  
տանիքում եռում է կեանք և գործունէու-  
թիւն, տներում և պարտէզներում բարձրա-  
նում են ուրախ ձայներ, երգեր, երեխայոց և  
կանանց ծիծաղ . . . :

Ըուաւելապէս ուրախութիւններ լինում են  
տօներին կամ հարսանիքներին:

1875 թուից տաճիկների աւերմունքներն և  
կոտորմունքներն առաւել շատանում են: Նոյն  
թուին Սերբերն և Վե լեռնցիները Ճնշու-  
լով տաճիկների գրած ծանր հարկերից և հա-  
րստահարութիւններից ապստամբեցան: Ճե-  
տեւեալ թուին Սերբիայի երիտասարդ և ա-  
ռատական իշխան Միլանը Վե լերան Նիկո-  
ղայոս իշխանի հետ գաշն կապեց իւրեանց և

միւս ցեղակից ազգերի ազատութեան համար պատերազմելու տաճիկների հետ: Միւնոյն ժամանակ Իռուղարիայում նցյ իսկ ապստամբութեան առաջին նշանն երևալուն պէս տաճիկներն և տեղայի չելքէզները սկսեցին իւրեանց կոտորմունքներն և արիւնահեղութիւններով էին կամենում խեղթել ապստամբութիւնը: Ի՞սկ հետեւալ 1877 թուին Աղեքսանդր Ի. կայսրը տաճիկների հետ սկսեց պատերազմ, որը համարեա ամբողջ մի տարի տևեց: Ի՞սկ տաճիկների սուլթանը տեսնելով որ չէ կարող այնքան ապստամբութիւններին և պատերազմներին դիմազրել խնդրեց Աղեքսանդր Ի. կայսեր վերջ տալ պատերազմին և խաղաղութեան դաշն կապել: Խաղաղութեան դաշն դրուեցաւ Ա. Պօլսի մօտ գտնուող փոքրիկ Սան-Ստեփանո գիւղում, 19 փետրվարի 1878-ին:

Որպէս զի կարգ և խաղաղութիւն մտցնուի Իռալկանեան թերակղզում, Սան-Ստեփանոյում վՃռեցին վեհաժողով կազմել որը եղաւ Գիրմանիայի Իռուղին մայրաքաղաքում: Այստեղ վՃռուեցաւ Սերբիայի և Աւ լեռան համար ան-

կախութիւն, իսկ բուլղարների համար առանձին աւատական իշխանութիւն, որը պէտք է կառավարէ քրիստոնեայ իշխան, և վերջինս պարտաւոր է միայն տարեկան հարկը տալ տաճիկներին. իսկ ներքին կառավարութիւնը մնում է իւր ձեռքը: Իռուղարիայի առաջին աւատական իշխանն եղաւ Գիրմանիայի Նեսսեն դքսի որդի երիտասարդ Աղեքսանդր Ի. ադենբերդը:



unzen Roffend

աւանու պատուի պահանջուր այս գալուքուր  
Տ զարդ այս մասի տակածից մախուս ան  
ուղղութեա և անուշ աշխանչութեա պահանջ  
ուն պահանջ մաշկուր այս Տ զախուսու  
մաշկուր պահանջուր աշխա այս ուղղութեան  
մախուս պահանջուր այս Տ անու  
շան պահանջուր Բ այս մասից մախուս  
ու մաշկուր պահանջուր պահանջուր ան

ՀՀ Ազգային գրադարան



NL0246440

